

Նազարյանի, Գր. Արծրունու, Բաֆ-
, Ռ. Պատկանյանի և ուրիշների
ձեռագրերով ձեռագրերը: Այդ գործիչ-
ին ու գրողներին հեղինակը չի վերց-
մ քաղաքական ու հասարակական
անքննից դուրս, հայ իրականու-
նից և սոցիալ-տնտեսական միջա-
րից կտրված: Նրանցից յուրաքանչ-
յուր տարբեր թելերով և ուղղություն-
ով կապված էր հայ հասարակա-
ն-քաղաքական շարժումների հետ,
ուրանշյուրն իր ձևով էր հասկանում
անհանկուցում ազգային-ազատագրա-
ն շարժումներին:

Գտնելով Արևելյան Հայաստանի մա-
լ, հեղինակը նկատում է, որ կապի-
լիտական գաղափարներն պրոցեսը
լիճակի շեղում խոշոր տեղաշարժեր
տարելու երկրի տնտեսական կյան-
մ: Հայաստանը և ամբողջ Անդրկով-
սը շարունակեցին մնալ հետամնաց
բարային երկիր՝ ֆեոդալական հա-
սարակցությունների բազմաթիվ մնա-
կեքներով: Այստեղից էլ պարզ է
տեսնում, թե ինչպես Հայաստանի,
ոռնակես, և Անդրկովկասի աշխա-
վորները կանգնած էին հակա-
ոդալական-դեմոկրատական ու
եցիայի խնդիրների լուծման առաջ և
ինչու Հայաստանում ու Անդրկով-
սում դասակարգային պայքարի հիմ-
կան հարցը դուրսագրությունն պայ-
րն էր ֆեոդալական հարաբերու-
նների ու այդ հարաբերությունները
ընդամենը ցարիզմի դեմ: Եվ այդ էր
մտածառը, որ երբ Արևմտյան Հայաս-
նում նույն ժամանակաշրջանում
նկվում էին գլխավորապես ազգա-
ազատագրական ելույթներ ու
զատամբություններ, Արևելյան Հա-
ստանում տեղի էին ունենում սո-
ալ-դասակարգային բնույթի գյուղա-
ական շարժումներ և ապստամբու-
ններ: Այդ մասին են վկայում ծա-
ված գյուղացիական ապստամբու-
նները հողատիրության դեմ՝ Անդր-
կասում և Հայաստանում (Ախտա,
իբանդրույու, Լոռի, Երևան և այլն):
Ինչպես ազգային-ազատագրական,
նպես էլ հակաֆեոդալական շար-

ժամների ժամանակ բուրժուազիան
հանդես էր բերում վախկոտություն և
անհետևողականություն: Այդ պատճա-
ռով էլ ազատագրական շարժումների
հիմնական շարժիչ ուժը գյուղացիու-
թյունն էր:

Վերլուծելով Անդրկովկասի և Հա-
յաստանի 19-րդ դարի երկրորդ կեսի
սոցիալ-տնտեսական հարաբերու-
թյունները, հեղինակը միաժամանակ ցույց
է տվել հայ ազգի կազմավորման պրո-
ցեսը, ընդգծելով, որ ազգային կա-
պերը հանդես են եկել ոչ թե տոհ-
մային կապերի միջոցով, այլ «շնոր-
հիվ մարդերի միջև ուժեղացող փո-
խանակության, աստիճանաբար ա-
ճող ապրանքային շրջանառության,
տեղական փոքրիկ շուկաների համա-
կենտրոնացման՝ մեկ համառուսա-
տանյան շուկայի մեջ»: (Լեհին, Երկեր,
հատ. 1, էջ 180):

Անդրկովկասը և Հայաստանը նույն-
պես աստիճանաբար ներգրավվում են
համառուսական շուկայի մեջ և դրա-
նով ամրանում են ծայրամասերի ա-
ռևտրա-փոխանակային տնտեսական
կապերը, որոնք իրական բազա են
դառնում հայ բուրժուական ազգի ձևա-
վորման համար: Միաժամանակ այս
նույն շրջանում տեղի ունեցավ տնտե-
սական, հայ ազգային կուլտուրական
ու քաղաքական կյանքի կոնսոլիդա-
ցիա. այդ ժամանակաշրջանում քաղա-
քացիական իրավունք ստացավ հայ
աշխարհիկ լեզուն, տեղի ունեցավ ա-
րևմտահայերի ու արևելահայերի մեր-
ձեցում, որին մեծ շափով նպաստեցին
մամուլը, գրականությունը, լայն ծա-
վալ ստացած ազգային-ազատագրա-
կան շարժումները և այլն:

Հեղինակը ճիշտ կերպով նշել է, որ
ազգային տարրերը միանդամից, պատ-
րաստի վիճակում երկնքից չեն ընկել-
նրանք ասպարեզ են եկել աստիճանա-
բար, որ հայ ազգը, ինչպես նաև բոլոր
«ազգերը հասարակական զարգացման
բուրժուական դարաշրջանի անխուսա-
փելի արդյունքը և անխուսափելի ձևն
են» (Լեհին, Երկեր, հատ. 21, էջ 78):

«Հայ ժողովրդի ազատագրական

պայքարը և արևմտյան պետություննե-
րը» գլխում հեղինակը հարուստ փաս-
տերի հիման վրա մերկացնում է անգ-
լո-ամերիկյան և արևմտյան մյուս
խմպերիալիստական պետությունների
զավադիր ու խարդախ քաղաքականու-
թյունը Մերձավոր Արևելքում և Բալ-
կաններում: Եվրոպական իմպերիա-
լիստների կողմից թյուրքիայի պաշտ-
պանությունը՝ նշանակում էր թյուր-
քիայի բաժանում ու գաղութացում,
թյուրքիայի տիրապետության տակ
գտնվող ժողովուրդների ստրկացում:
Այդ լավ էին տեսնում ու հասկանում
բալկանյան ժողովուրդների և հայ ժո-
ղովրդի ուղղություն-դեմոկրատական
շարժման ներկայացուցիչները, դրա
համար էլ նրանք երես էին դարձնում
արևմտյան պետություններից և իրենց
ժողովուրդների ազատագրությունը կա-
պում էին միայն Ռուսաստանի հետ:
Հեղինակն այդպես էլ ավարտում է իր
մենագրությունը, որի վերջին գլուխը
նվիրված է հենց ռուսական օրինետա-
ցիայի հարցին: Արևելքի նկատմամբ
Ռուսաստանի պրոպագանդիստ շատ
վաղուց հասկացել էին հայ տառաչվոր
մտածողները և դարերի ընթացքում
պայքարել Ռուսաստանին միանալու
համար: Այդ պայքարը հայ ժողովրդին
հանգեցրեց ցանկալի արդյունքի, նա
իր բախտը ընդմիջտ և անվերադարձ
կապեց ռուս ժողովրդի հետ, որը նրան
բերեց իսկական ազատություն և ազ-
գային վերածննդի հնարավորություն:

Քննարկվող մենագրությունը, ան-
շուշտ, հաջողված գործ է, սակայն
այն զերծ չէ թերություններից:

Հայ ազգի կազմավորման պրոցեսը
տեղի է ունեցել սոցիալ-տնտեսական
բարդ իրադրություն պայմաններում:
Հեղինակն այն պետք է վերաբերի խորու-
թյամբ ու յայնքով և չպետք է շոշափեր
միջանկյալ, միայն 1850—70-ական
թվականների ազգային-ազատագրա-
կան շարժումների լուսարանման կա-
պակցությամբ: Լավ կլիներ, եթե հեղի-
նակը հանգամանորեն կանգ առներ
հայ ազգի ձևավորման, տնտեսական-
քաղաքական-կուլտուրական պայման-

ների, հայ արդյունաբերական բուր-
ժուազիայի, պրոլետարիատի դերի և
այլ հարցերի վրա, որը ամբողջական
կարծանք աշխատության մեջ առաջին
անգամ շոշափվող կարևոր այդ հարցը:
Հեղինակը հեշտությամբ աշխատու-
թյան շարադրանքը կարող էր հասցնել
մինչև 20-րդ դարի սկիզբը, մանա-
վանդ, որ բերված նյութերի մի որոշ
մասը վերաբերում է ավելի ուշ շրջա-
նին՝ 1880—1890-ական թվականներին
(տե՛ս 44, 46, 164, 165, 167, 188, 192
և այլ բազմաթիվ էջեր):

Աշխատության մեջ բավականին տեղ
է տրված Արևելյան Հայաստանի սո-
ցիալ-տնտեսական հարաբերություն-
ներին և այլ միջանկյալ հարցերի, ո-
րոնք այնքան էլ չեն առնչվում գրքի
վերնագրին: Վատ չէր լինի, եթե այդ
մասին սեղմ շարադրանքի հետ միասին
մանրամասն տրվեր Պոլսի և Արև-
մտահայ կոմպարատրական բուրժուա-
զիայի, հայ ամիրանների, արհեստավո-
րության, էսնաֆությունների ամբողջա-
կան պատկերը:

Զեյթունի ապստամբությունից ոչ
պակաս հետաքրքրություն է ներկա-
յացնում նաև Վանի 1862 թվականի
ապստամբությունը: Բերված նյութերից
երևում է, որ ապստամբներին օգնու-
թյան են եկել շրջապատի մոտ 20 հա-
զար աշխատավորներ: Դա մի հուժկու
շարժում կարող էր լինել, սակայն բն-
թեքողի համար այդ մեծ ապստամ-
բությունը մնում է անհայտության
մեջ: Հեղինակից որոշ աշխատանք է
պահանջվում նաև Զեյթունի ապստամ-
բության սիստեմավորման համար: Կա-
րելի է խոսել նաև առանձին կրկնու-
թյունների և լեզվական որոշ թե-
թեքությունների մասին: Սակայն նըշ-
ված թերությունները չեն գցում աշխա-
տության արժեքը:

Հեղինակը գնահատելի աշխատանք է
կատարել, վերցնելով մեր պատմու-
թյան կնճռոտ շրջաններից մեկը, և
հաղթահարել է մեծ դժվարություններ
ամբողջական մենագրություն ստեղծե-
լու համար:

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆ